

Այս թաղին մեջ գինետուն չկայ եւ օղի ծախուիլը արգելուած է... Ի՛նչ դժբախտութիւն: Թաղեցիին երեկոները ընդհանրապէս Իլիմօն Իսկելէսի կը հանդիպի եւ հոն քանի մը գաւաթ օղի խմելէն ետքը կ'երթայ իւր թաղը՝ ուր տան մը մեջ ալ գաղտնի օղի կը ծախուի: Շատ մը ընտանիքներ իրենց գաւակներն օղիէ կտրելու համար այս թաղը կու գան, ինչպէս որ տենդ ունեցողներն ալ հիմա Միջագիւղ կ'երթան՝ ջուր խմելէ կտրուելու համար:

Ժողովուրդն եկեղեցասէր է, սակայն քարոզիչ չուզեր. եթէ տարին մէկօրեկու անգամ Պատրիարքարանէ քարոզիչ մը դրկուի հոն՝ թաղեցիին սիրով կ'ընդունի զայն այն պայմանաւ, որ քարոզը տալուն պէս թաղէն դուրս ելնէ:

Կիները մեզի պէս ժրաջան են, վայրկեան մը պարապ չեն նստիր, *էնթարի, շալվար* հագած՝ *ֆէսհանէի* համար *ֆէս* կը հիւսեն, նստած իրենց տանը դրան սեմին վրայ, որու առջեւէն կ'անցնի թաղին կոյանոցը: Թաղին աշխատատեղերէ գոնէ հանգանակութիւն մ'ալ բանային եւ անոր արդիւնքովն մաքրէին սոյն կոյանոցն, որուն մեջ երբեմն կ'իյնան *լամպիքա* շատկէկ խմողները. իսկ եթէ թաղեցւոյն քիթը շահ մ'ունի այդ կոյանոցին հոտէն՝ ատոր ըսելիք չունինք:

Կիները լայնածաւալ սիրտ մ'ունին, եւ այս պատճառաւ երկարակեաց են. ամենէն կարճ կեանք ունեցող կինն իննսունըինը տարեկան է, եւ երբ հարիւր տարեկան կին մը մեռնի՝ ծաղիկ հասակին մեջ առ Աստուած փոխուած կը համարուի, իսկ երբ մէկ տարեկան աղջիկ մը մեռնի՝ վիժած կը սեպուի:

Իգական սեռին մեջ փոքրիկ մաս մը կայ, որուն հետ խօսելու համար գրահ հագնելու է, վասնզի ասոնք փայտով կը խօսին, եւ եթէ կանխաւ զգուշութիւն չընես՝ գլուխդ կը պատահեն:

Բամբասանքն հոս յուսացուածէն աւելի է, միայն թէ սահմանափակ ըլլալով՝ *էնթարի շալվար*ին վրայ կը դառնայ միշտ:

Թաղին բերքն է փայտէ շինուած տղու խաղալիկներ, որոնցմէ երբեմն մեծ մարդեր ալ ծախու կ'առնեն իրենց համար:

Օդը թեպէտեւ աղէկ է, բայց բնակիչներուն թմրութեանը նայելով՝ կ'երեւի որ քիչ մը թմրեցուցիչ է: Էյուպցիներէն ոմանք փողոցը քալած ժամանակնին կը քնանան եւ աղուոր երագներ կը տեսնեն: